

6(723)

2026

Հրատարակվում է
1999թ. սեպտեմբերից

Лусарар ●

Հանաչել զիմաստություն եւ զխրատ, իմանալ զբանս հանճարոյ

ԿՐԹԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԹԵՐԹ

● Lusarar


ՎԱՅԱՆ ՏԵՐՅԱՆ

ԵՐԱՆԻ ՆՐԱՆ...

Երանի նրան, ով հայրենական
խաղաղ հարկի տակ հանգչում է հիմա,
Ուն չեն սարսեցնում հողմերը գուժկան,
Ով գալիք օրվան ժպտում է անահ...
Երանի նրան, ուն հաստատ ուղին
Բացված է ազատ և հեռու, և լայն,
Ուն չի կասեցնում կասկածը մթին,
Ուն քաղցր կոչ է քվում ամեն ծայն...

Երանի նրան, ուն մի մայր գթոտ
Օրորում է իր երգով հնամյա,
Ուն չի սարսեցնում մի ահ անծանոթ,
Ով հայրենական տուն ունի հիմա...
Ով պարզ է մայրում մթին գիշերին,
Ով պարզ է ժպտում արևոտ օրվան,
Ով խաղաղ սրտով մտնում է շիրիմ -
Հազար բյուր անգամ երանի նրան...

Փշով են պատած ուղիներըս մութ,
Մեր տեսիլքները սառն ու ահավոր,
Մեզ գգվում են միշտ գգվանքով մի սուտ,
Մեզ խաչ են, խաչ են հանում ամեն օր...
Մութ է, և ցուրտ է, և բուք, և բորան,
Մեր ուղիներում սարսափ է և մահ.
Արյունոտ ուղի... Երանի նրան,
Ով հայրենական տուն ունի հիմա...



ԱՐԱԳԱԾԻ ԼԱՆՋԵՐԻՆ

Հունիսի 14-ին «Հանուն Հայրենիքի»
հասարակական կազմակերպությունը
20-րդ անգամ ամառային արևադարձը նշեց
Արագած լեռան հարավային լանջին գտնվող
Ալիխանյան եղբայրների կողմից 1942թ. հիմ-
նադրված Արագածի տիեզերական մասնիկ-
ների հետազոտական բարձրլեռնային կայա-
նի տարածքում գտնվող
մոտ 5000-ամյա ցլա-
կերպ վիշապաքարի
մոտ: Այս հսկա կոթողն
ունի 360x116x44 սմ չա-
փեր: Հայտնաբերվել է
1924թ. Արագածի Քա-
րակապ տարածքում և
տեղափոխվել է Քարե
լճի ափ: Ծովի մա-
կերևույթից 3200 մ
բարձրությամբ կայանի
մոտակայքում է նաև
Քարե լիճը, որը սառցա-
կալած է մնում մինչև
ամառվա կեսը: Օրվա
ընթացքում ուխտագ-
նացներն սկզբում այցելեցին Հայոց Ամանորը
հունիսի 14-ին նշելու նախաձեռնող, երջան-
կահիշատակ աստղաֆիզիկոս, տոմարագետ,
ֆիզմաթ գիտությունների թեկնածու Գրիգոր
Բրուսյանի (28. 06. 1955-11. 04. 2021) շիրի-
մին, ծաղիկներ խոնարհեցին, չնայած տեղա-
տարափ անձրև էր:



Այս տարի առատ տեղացած ծյունը դեռևս
իր ծածկի տակ է պահում Արագածը: Քարե
լիճ տանող ճանապարհը բաց է, սակայն
երկու կողմերում տեղ-տեղ մինչև 3-4 մ բարձ-
րությամբ ձնե պատեր կան: Աջ ու ախյակ ծա-
ղիկներ են, հատկապես՝ ձնծաղիկներ՝ ձգող
ու գերող: Հիշում են Վարպետին.

... Ծաղիկներդ հազար գույնի,
Հազար անուն, հազար բույր:

Մոտ 0, 3 ք/կմ մակերես, առավելագույնն
9 մ խորությամբ, սառցե գոյացությունների
արդյունքում առաջացած լիճը, որի արևմտ-
յան ափից սկիզբ է առնում Արքաշեն գետը,
ամբողջությամբ սառցակալած ու ծնածածկ է
դեռևս: Լճափին գտնվող վիշապաքարին հա-
սանք ձյան հաստ շերտի վրայով: Իհարկե,
այդ ընթացքում տրակտորով բացում էին
բարձրլեռնային կայան մտնող ճանապարհը,
որի աջակողմում է վիշապաքարը: Տեղի ունե-
ցավ խնկարկում: «Հանուն Հայրենիքի» ՀԿ
նախագահ Ներսես Ներսեսյանը ներկայաց-
րեց՝ ինչու է Հայոց Ամանորը, ըստ Գ. Բրուս-
յանի, նշվում ամառային արևադարձից մեկ
շաբաթ առաջ: Գրիգոր Բրուսյանը 1992-2002

թթ. Բյուրականի աստղադիտարանում եղել է
հայկական օրացույցների հետազոտությանը
նվիրված գիտական թեմայի ղեկավար: Նրա
տոմարագիտական ուսումնասիրությունների
հիմնական ուղիորդ եղել է հայկական հին և
հնագույն օրացույցների դաշտը: Ըստ գիտ-
նականի՝ Հայոց Հայկյան օրացույցն սկսվում

իրաչքով: Լուսանկարում են, ջրվեժը, որը
ներքևում հանդարտվում ու անցնում է բնա-
կան դարպասների միջով, միախառնվում ամ-
բողջությամբ փրփուր հիշեցնող Ամբերդ գե-
տին: Իր ժամանակին Վարպետը ներշնչվել ու
ստեղծագործել է հրաշք բանաստեղծությու-
նը.

Լճակներդ՝ լույս-փերուզ.
Առուններդ՝ մեջքիդ փայլուն
Պերճ գոտիներ ոսկեփյուն:
Աղբյուրներդ գիշեր ու զօր
խոսքի բռնված իրար հետ,
Վտակներդ գիլ ու գլոր
Արեշունե փեշերեդ:

Արդեն երկրորդ տարին է՝ վերա-
կանգնման և ամրակայման աշխատանքներ
են ընթանում Ամբերդ ամրոցում: Հունիսի 14-
ին շատ էին այցելուները: Իսկ տարածքում
արդեն սկսել են ժամանակավոր հաստատվել
մեղվապահները, անասնապահները:



Արդեն 4-րդ անգամ «Հանուն Հայրենիքի»
ՀԿ կազմակերպած ուխտագնացության մաս-
նակիցն են: Հետաքրքիր ու հայրենաճանաչ
միջոցառում է: Հատկապես կարևորվում է մեծ
գիտնականի՝ Գ. Բրուսյանի դերը Հայոց տո-
մարագիտության գործում: Անցած երեք տա-
րիներին Ամբերդի տարածքը պատված էր
կարմիր խաժխաժ-կակաչներով, իսկ այս
տարի այդ գեղեցկուհիները դեռ չէին ծաղկել:

Ջոհրաբ ԸՈՔՈՅԱՆ


ԱՐՈՒՋԻ ԱՄՐՈՅՈՒՄ ՀԱՅ-ԻՏԱԼԱԿԱՆ ԱՐՇԱՎԱՆՄԱՐԻ ՀՆԱԳԻՏԱԿԱՆ ՊԵՂՈՒՄՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ՝ ԱՆԽԱՏՈՒԹՅԱՐ

Ս. ք. հունիսի 1-ին ՀՀ Գիտություն-
ների ազգային ակադեմիայում կայա-
ցավ «Aruch. Rediscovering a Medieval
Armenian Capital. Archaeological
Campaigns 2022-2025» գրքի շնոր-
հանդեսը:

Ողջույնի խոսքով հանդես եկավ
ՀՀ-ում Իտալիայի Հանրապետության
արտակարգ և լիազոր դեսպան Ալե-



սանդրո Ֆերանտին՝ բարձր գնահա-
տելով հայ-իտալական համագործակ-
ցությունը: «Արուճը Հայաստանի, մի-
աժամանակ համամարդկային ժա-
ռանգություն է: Մեր հավակնությունն
է՝ Արուճը վերածվի հայ-իտալական
հարաբերությունների փայլուն օրի-
նակի: Այս գեղեցիկ տարածքը պետք է
վերածել նաև գրավիչ վայրի, որը



թույլ կտա ունենալ տնտեսական հնա-
րավորություններ և գրավել զբոսաշր-
ջային մեծ հոսքեր: Սրան հասնելու
համար պետք է բոլորս միասին աշ-
խատենք՝ հստակ ունենալով մեր
նպատակները և կիսվելով մեր ջանքե-
րով և աշխատանքով», -ասաց դես-
պանը:

Ավելի հանգամանորեն՝ տես էջ 3

ԳՐԶՈՒՄ ՆԱԽԻՋԵՎԱՆՆ Է՝ ԻՐ ԱՄԲՈՂԶ ԴԱՏԱՌԻԹՅԱՄԲ

Նախիջևանի Ինքնավար Հանրապետության Շահբուզի շրջանի Առինջ գյուղում է 1947թ. հուլիսի 20-ին ծնվել իր ծննդավայրի լավագույն գիտակը՝ Արզամ Այվազյանը։ Նրա 370 աշխատություններից 70-ից ավելին լույս են տեսել առանձին գրքերով։ Հայաստանի մշակույթի վաստակավոր գործիչ, պատմաբան, մատենագետ, հայագետ, նախիջևանագետ, լրագրող, մշակութաբան, Հայաստանի նախագահի մրցանակաբաշխության հումանիտար գիտությունների 2010 թվականի մրցանակակիր, Գրական փաստագրության միջազգային ակադեմիայի ակադեմիկոսի առայժմ վերջին ու մեծածավալ գիրքը, որը փաստավավերագրական բնույթ ունի և հիմնված է արխիվային, վիճակագրական ու պատմական բազմաթիվ աղբյուրների վրա, լույս տեսավ 2026 թվականին՝ հեղինակային հրատարակչությամբ։ «Նախիջևանի հայկական նյութական և հոգևոր մշակույթի պատմական ժառանգությունը» եռալեզու գիրքը նվիրված է հազարամյակներ շարունակ Հայոց երկիր եղած Նախիջևանի պատմության, մշակույթի և հայկական ժառանգության ուսումնասիրությանը։ Աշխատության մեջ ընդգրկված են հազարից ավելի լուսանկարներ, քարտեզներ և փաստաթղթեր, որոնք հավաքվել են ինչպես տարբեր հետազոտողների աշխատանքներից, այնպես էլ հեղինակի երկարամյա ուսումնասիրությունների արդյունքում։ Այս հարուստ նյութերը հնարավորություն են տալիս առավել ամբողջական պատկերացում կազմել Նախիջևանի պատմամշակութային ժառանգության մասին։

Հունիսի 2-ին Երևանում՝ «Թեքեյան» կենտրոնի դահլիճում, տեղի ունեցավ այս կարևոր աշխատության շնորհանդեսը։ Ներկա էին Ա. Այվազյանի աշխատությունները գնահատողներ, գործընկերներ, ընկերներ և մտերիմներ, գրքի մեկնասաներ, ակադեմիական շրջանակների հեղինակավոր անդամներ, մշակույթի և արվեստի գործիչներ, գիտնականներ, հանրային ու հասարակական գործիչներ, պատմաբաններ, հյուրեր։ Գրքի մեկնասան է Գագիկ Գերասիմի Մելիքյանը։ Ողջույնի խոսքով հանդես եկավ ու Ա. Այվազյանին ներկայացրեց պ. գ. դ., պրոֆեսոր, Հայաստանի Թեքեյան մշակութային միության կենտրոնական վարչության նախագահ Ռուբեն Միրզախանյանը։ Շնորհակալություն հայտնեց գրքի հեղինակին՝ հսկայածավալ, բացառիկ կարևորություն ունեցող աշխատության համար։ Տեղեկացրեց. «Նախիջևանում աղբյուրների կողմից ոչնչացվել են ավելի քան 28 հազար հայկական միջնադարյան հուշարձաններ, այդ թվում՝ եկեղեցիներ, վանքեր, խաչքարեր, գերեզմանատներ և այլ արժեքավոր կոթողներ։ Նախիջևանում այլևս չեն բնակվում հայեր։ Այդ ամենն արվել է 1950-1988 թվականներին, երբ դեռևս Ադրբեջանի հետ մենք գոյատևում էինք խորհրդային Միության սահմաններում»։

Արզամ Այվազյանի անխնայ աշխատանքը և նրա գրքերի կարևորության մասին խոսեց պատմաբան, պ. գ. դ., պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, ակադեմիկոս Աշոտ Մելքոնյանը՝ նշելով, որ թուրքերը Նախիջևանի մասին խոսելիս հետաքրքրվում են՝ ո՞ր են հայկական աղբյուրների նյութերը։ «Հայկական աղբյուրների նյութերը դրվեցին սեղանին, թարգմանվեցին տարբեր

լեզուներով, նաև թուրքերեն՝ լռեցնելով մեր թշնամուն», - հավելեց ակադեմիկոսը և անդրադարձավ գրքի մեկնասան Գ. Մելիքյանին, որը հեղինակին հավասար աշխատել է գրքի վրա, բացի նյութականից, նաև մտավոր աջակցություն է ցուցաբերել։ «Ինչ կուզես, կարող ես գտնել «Նախիջևանի հայկական նյութական և հոգևոր մշակույթի պատմական ժառանգությունը» աշխատություն



նում։ Տեղաբնիկ լինելը, հայրենի եզերքը լավ ճանաչելը մեծ դեր է ունեցել գրքի ստեղծման գործում։ Նախիջևանը Հայաստանի մաս ընկալելու հանգամանքը լուրջ գիտաքաղաքական կարևորություն ունի։ Եվ այս գրքում դա կգտնես։ Նախիջևանը, որը ժայռապատկերներից է սկսվում, մեր հնագույն՝ Նոյի ժամանակաշրջանից է սկսվում. երբ Նոյն իջավ Արարատից։ Այսօր մեզ արգելվում է Արցախ անունն արտաբերել, մոռանում ենք, որ պետք է Նախիջևանից խոսենք, որով շատ ու շատ հարցեր կլուծվեն, և օտարին էլ պարզ կդառնա՝ որն է Հայաստան աշխարհը», - խոսքը շարունակեց Ա. Մելքոնյանը։ Արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր, Հայաստանի մշակույթի վաստակավոր գործիչ, Միլանի Ամբրոջյան ակադեմիայի անդամ, Մոնպելիեի ակադեմիայի թղթակից անդամ Լևոն Զուքասյանը նշեց՝ գործ ունենք բացառիկ գրքի հետ, որը ծնվել է Արզամ Այվազյանի բազում հոգվածների հիման վրա։ «Տասնամյակներ շարունակ նա ուսումնասիրել է հարազատ երկրամասի պատմությունը, պատմական հուշարձանները՝ ցույց տալով, որ ունենք հսկայական գանձերի մի տարածք։ Հսկայածավալ աշխատություններ է գրել Ա. Այվազյանը՝



նը Նախիջևանի մասին, որը մտածել է տալիս՝ ինչքա՞ն պետք է մարդ սիրի իր հայրենիքը, որ այսքան նվիրումով աշխատի։ Հակառակ բոլոր դժվարությունների՝ այն ազգային արժեհամակարգի տեր մարդիկ, որոնք ճանաչել են Արզամ Այվազյանին,

միշտ աջակցել են նրան», - ասաց Լ. Զուքասյանը՝ հավելելով՝ ճիշտ է՝ Այվազյանն օգտագործել է բազում աղբյուրներ գիրքը ստեղծելիս, բայց նա սկսել է արձանագրել այն, ինչ որ ունեցել ենք։ Գիրքը յուրահատուկ հանրագիտարան է հարազատ երկրամասի մասին՝ ներկայացնելով ժայռապատկերներ, խաչքարեր, տապանաքարեր, եկեղեցիներ, վանքեր, գորգարվեստ, զարդարվեստ, կրթություն, և այլ բնագավառներ։ Լ. Զուքասյանն Ա. Այվազյանի կատարած հսկայածավալ աշխատանքը համեմատեց Վերժինե Սվազյանի՝ Հայոց Մեծ Եղեռնի նվիրված դարձյալ մեծածավալ աշխատանքների հետ։

Խոսելով իր կատարած աշխատանքների մասին՝ Ա. Այվազյանը նշեց բոլոր դժվարությունները, որ կային խորհրդային տարիներին՝ Նախիջևանում ուսումնասիրելու հայկական պատմական հուշարձանները։ Առավել ցավալի է, երբ կրելով բազում դժվարություններ, հաղթահարելով վտանգներ, գրել է գրքերը, սակայն այս անգամ տպագրության հարցում դժվարությունների է հանդիպել Երևանում։ Նորաստեղծ գրքում, հեղինակի ներկայացմամբ, Նախիջևանը հայ ժողովրդի կազմավորման հնագույն օջախներից մեկն է և կարևոր դեր է ունեցել Հայկական լեռնաշխարհի պատմամշակութային զարգացման գործընթացում։ Այն եղել է Մեծ Հայքի հարուստ ու զարգացած աշխարհներից մեկը։ Առանձնահատուկ նշանակություն է ունեցել Տիգրան Մեծի օրոք, երբ Գողթն գավառում հիմնադրվել է Տիգրանավան քաղաքը։ Նախիջևանի հոգևոր, մշակութային, տնտեսական ու ռազմական կարևորությունը հաշվի առնելով՝ հաճախ միմյանց հետ մրցակցել են Սյունիքի և Վասպուրականի տերերը։ Գրքում ընդգծվում է, որ Նախիջևանը դարեր շարունակ եղել է առևտրական և մշակութային կարևոր կենտրոն՝ կապելով Փոքր Ասիան, Պարսկաստանը և հարակից երկրները։ Տարածաշրջանն անցել է հայ ժողովրդի պատմության բոլոր կարևոր փուլերով և պահպանել հայկական

մշակույթի բազմաթիվ արժեքներ։ Ա. Այվազյանը ներկայացրեց նաև, թե ինչ դժվարությունների է հանդիպել նաև մոր գրքի տպագրության հարցում և շնորհակալություն հայտնեց հովանավորին, շնորհանդեսը կազմակերպողներին։ Ընթացքում էկրան

նին ցուցադրվեցին Ա. Այվազյանի հեղինակած տասնյակ գրքերը։

Վերջում եղան այլ ելույթներ և առաջարկներ։ Գրականագետ Անիտա Դոլուխանյանն առաջարկեց գրքի որոշ քանակ հատկացնել աշխարհի ճանաչված գրողարաններին։ Շնորհանդեսին ներկա էին նաև արցախցի պատմաբաններ, լրագրողներ, քաղաքական գործիչներ։ Ա. Այվազյանը ներկայացրեց արցախցի լրագրող Միքայել Հաջյանին, որի որդիները՝ Նորայրն ու Երվանդը, մարտիրոսվել են Արցախյան 2016 և 2020 թթ. պատերազմներում։ Դժվար է նրա համար, բայց ուժ է գտնում իր մեջ, ներկա գտնվում նման միջոցառումների։ Պատմաբան Սլավա Սարգսյանը նշեց՝ 20 տարի աշխատել է Ա. Այվազյանի հետ և նրա աշխատասիրությունից ոգևորված՝ զբաղվել է Արցախի պատմական հուշարձանների ուսումնասիրությամբ, գրքեր է հրատարակել։ «Կաճառ» գիտական կենտրոնի ղեկավար Միեր Հարությունյանը, որը նույնպես ներկա էր շնորհանդեսին, Ա. Այվազյանի մասին իր ֆեսուրյան էջում գրել է. «Մարդ, որ մի ամբողջ ինստիտուտի գործ է անում։ Դրվատանքի է արժանի Գագիկ Մելիքյանը՝ մեկենասության համար։ Արզամ Այվազյանը հույս է հայտնում, որ գիրքը կծառայի որպես արժեքավոր աղբյուր հետագա գիտական ուսումնասիրությունների համար և կնպաստի Նախիջևանի պատմության ու մշակույթի պահպանման, ճանաչման և



արժևորման գործին»։ Իսկ տնտեսագետ Գոհար Գասպարյանի ֆեսուրյան էջում կարդում ենք. «Մեծ պատիվ և անկեղծ հիացմունք ապրեցի՝ մասնակցելով Ա. Այվազյանի գրքի շնորհանդեսին։ Այս ծավալուն և բացառիկ արժեք ներկայացնող հատորը գիտական մտքի, ազգային հիշողության և մշակութային ինքնության պահպանման եզակի կոթող է։ Տասնամյակների անձնվեր աշխատանքի, դաշտային ուսումնասիրությունների, փաստավավերագրական հարուստ նյութերի և հեղինակավոր աղբյուրների համադրման շնորհիվ Արզամ Այվազյանը ոչ միայն փաստագրել, այլև պատմության համար փրկել ու հավերժացրել է Նախիջևանի հայկական նյութական և հոգևոր ժառանգության անգնահատելի վկայությունները՝ ստեղծելով մնայուն արժեք հայագիտության, պատմագիտության և մշակութաբանության համար»։


Ինչ խոսք, այսօր Նախիջևանում գրեթե ամբողջությամբ ջնջված է հայկական հետքը, և միայն գրքերում ու այլ աշխատություններում է պահպանվել մեր հայրենիքի, մշակույթի, սրբավայրերի ու հայի հետքի մասին։

ՎԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՆԱԽՐԻ ՀՈՒՏԻԿՅԱՆԻ «35» ԳԻՐՔԸ

«35» վեպը պատմություն է 35 տարվա գաղտնիքների մասին, որոնց մասին չեն խոսում: Այդ գաղտնիքներով է պատված հերոսական Արցախը: Հայ ազգի լավագույն զավակների ազատագրական պայքար, հաղթանակ, իսկ հետո՝ խարդավանքներ երկրի ներսում և դրսում: Գործակալական ցանցեր, դավաճանություն, փող ու հայրենիքի վաճառք. ահա այն ցավոտ պատմությունը, որ լի է բացահայտումներով: Դրանցով ձեր աչքերը կտեսնեն ամբողջ իրականությունը, և դուք կհասկանաք, թե ինչու այսօր մենք չունենք Արցախ:

Վեպը գեղարվեստական է, այնուամենայնիվ, ընթերցողը, խորանալով իրեն ծանոթ դեպքերի ու իրադարձությունների մեջ, ի վերջո, համագում է այն եզրակացության. թե ինչու «35», ու գտնում է իրեն հուզող հարցերի պատասխանը: Անցումները՝ վավերագրությունից գրականություն (գեղարվեստ) տանող դրվագները, բավականին կտրուկ են, ինչին նպաստել է նաև հեղինակի լրագրողական ծիրը: Հմտորեն գործածված են Մարտունու, Ալաշկերտի և Արցախի բարբառները, որ համուհոտ են պարզաբան շարադրանքին: Կերպարները ևս շատ հետաքրքիր են, որոնց մի մասը նստած է դահլիճում: Շատ կարևոր են պատմական փաստերը, որոնք պատմաբանների համար արժեքավոր աղբյուրի դեր են կատարելու. օրինակ՝ թե ինչպես հայաթափվեց Նախիջևանը:



Վեպի կերպարների մեջ առանձնանում են Միհրը, որ խորհրդանշում է հայ ազգի նվիրյալ զավակներին, և Վասակը, որը դավաճանության և թշնամու հետ գործարքների հեղինակն է:

Վեպը հարուստ է պատերազմի տեսարաններով, հայ զինվորների հերոսական արարքներով, բայց նաև քաղաքական գաղտնի երկխոսություններով: Բացահայտվում են հերոսների հոգեբանական վիճակները, կերպարների զարգացումը և ներքին հակամարտությունը ես-ի և մենք-ի միջև...

«35»-ը կառուցված է իրականության վրա. այն կբացի ձեր աչքերը՝ ցույց տալով նաև Գալիքի ճանապարհը...

Գրքի շնորհանդեսը «Տերունական աղոթք»-ով օրհնեց Տավուշ աշխարհի Բերդի հոգևոր հովիվ տեր Արամ քահանա Միրզոյանը:

Գրքի հեղինակ Նախիջևանը, շնորհակալություն հայտնելով ներկաներին, որոնց իր համախոհներն ու գաղափարակիցներն է համարում, պատմեց, որ գիրքը գրվել է երեք ծանր ու դժվարին տարիների ընթացքում, և այսօր ուրախ կլինի, որ ներկաներն առավել անկեղծորեն արտահայտեն իրենց նկատառումները վեպի մասին:

Արցախի մշակույթի նախկին նախարար Լեռնիկ Հովհաննիսյանը նշեց, որ գրքի շատ դրվագներ իրեն ծանոթ ու հարազատ են, քանի որ անձամբ գտնվել է այդ դեպքերի հորձանուտում, և այսօր կրկին վերապրում է «88»-ից առ այսօր տեղի ունեցած բոլոր իրադարձությունները: Չնայած այն հանգամանքին, որ

Փաստեր էլ կան, որոնց մասին ընթերցողն առաջին անգամ է լսում: Վեպում հորինված կերպարներ չկան: Կարդացվում է շատ մեծ հետաքրքրությամբ:

Հեղինակի գործընկեր, ժուռնալիստ Դավիթ Սարգսյանը, ողջունելով ներկաներին, ցավով արձանագրեց, որ իր և իր պայքարի ընկերների համար նման հաղթանակները մի տեսակ ընդհատակ են հիշեցնում, որ կային խորհրդային տարիներին: Նախիջևանի հետ նրան կապում է 20 տարվա անխախտ ընկերությունը, որի ընթացքում ունեցել են և՛ նվաճումներ, և՛ ծախսեր: Շատ ուրախ է, որ իր գաղափարակից ընկերը իր ուժը փորձել է գեղարվեստական արձակի մեջ ու հաջողություն գրանցել: Իրական պայքարը հնարավոր է դառնում միայն համատեղ ուժերով ու կուռ միասնությամբ:

Կինովավերագրող Հովհաննես Իշխանյանը խոսեց իր և Նախիջևանի ծանոթության մասին գրքի շրջանակներում. դա 2022 թվականի հուլիսին էր, երբ հանձնվում էին Բերդորն ու Աղավնոն, և Նախիջևանի մշակութային բազմաթիվ միջոցառումներով փորձում էր կասեցնել այդ գործընթացը: «35» վեպին անդրադառնալով՝ բանախոսը արձանագրեց, որ այն լեզվական բարդ կառույց չի ներկայացնում իրենից: Գրքում առկա են իրադարձությունների զարգացման արագ անցումներ: Սա հետաքրքրություն առաջացնող հնարք է, որը նպատակ ունի ընթերցողին անընդհատ վեպի մեջ պահել: Հեղինակի լրագրողական հմտությունը, փորձը ունեցել

են իրենց դրական ազդեցությունը այն առումով, որ գեղարվեստական գրականության մեջ շատ չեն այն դեպքերը, երբ հստակ տրվում են իրադարձությունների կոնկրետ թիվը, ամիսը, ժամը: Նախիջևանը՝ որպես ոչ հաճախ գործածվող միջոց, բերել է գրականություն: Վեպի ոճը ևս ողջունելի է. առկա են կարճ, համառոտ նախադասություններ: Գրքում նկատելի է հերոսական ռեալիզմը. հերոսները հստակ որոշումներ են կայացնում, չեն վախենում, չեն երկնչում, սխրանքներ են գործում: Կերպարները բնութագրված են պարզ ու հասկանալի լեզվով, այլ ոչ թե հեղինակը խորանում է նրանց հոգեբանության մեջ: Տեսարանները կենդանի են, գործողությունները չեն ընդհատվում: Եզրակացությունները ևս պարզ ու հասկանալի են արվում, և ընթերցողին երևակայելու քիչ հնարավորություն է տրվում: Ինչ նպատակով որ վեպը գրվել է, և ինչի համար պետք է ծառայի այն, բանախոսը համոզված է, որ դա լինելու է շատ արագ ու տեղին: Վեպը նրա մասին է, որ պայքարը պետք է շարունակել:

Գրքի հեղինակն այն կարծիքին է, որ դեռ շատ աշխատանք կա անելու, որպեսզի ձևավորվի ազգային գիտակցություն ունեցող հանրություն:

Հոգեբան, Արցախյան պատերազմի ժամանակ Ն. Հովսիկյանի հրամանատար Վիտյա Յարամիշյանը, դիմելով դահլիճին, գոհունակությամբ նշեց, որ Արցախի բռնի տեղահանությունից հետո սա առաջին հնարավորությունն է՝ հաղորդակցվելու նման արժանապատիվ հանրության հետ և կիսվելու իր խոհերով: Շնորհակալություն հայտնեց հեղինակին և՛ գրքի, և՛ համատեղ գործունեության, և՛ տարատեսակ շփումների համար: Գուցե տարիներ անց վեպը կգնահատվի ավելի բարձր արժեքների համար, քան այսօր ենք գնահատում. դա ժամանակի խնդիր է: Եվ քանի որ դեռ չէր հասցրել վեպը կարդալ (ծանոթ էր միայն հեղինակի հատվածաբար հրապարակումներին), ապա չէր կարող ամբողջական ընկալման շրջանակներում տեսակետ արտահայտել: Մնում է միայն մանկավարժի, հոգեբանի ու զինվորականի տեսանկյունից մոտենալ գրքի այն հատվածներին, որոնք արդեն ծանոթ էին նրան: Ընթերցած հատվածներից պարզ երևում է, որ ընթերցողն անմիջապես կլանվում է նրա բովանդակությամբ ու հետաքրքրությամբ փորձում իմանալ, թե ինչ կլինի հետո, ինչպես կծավալվեն իրադարձությունները հետագայում: Նրա կարծիքով՝ պատերազմներն անխուսափելի են այնքան, քանի գոյություն ունեն հասարակությունները: Դա անձնավատ երևույթն է, որ հորինել է հասարակությունը: Պատերազմն իր հետ բե-

րում է ամենասարսափելի իրողությունները՝ մահ, սպանություններ, ավեր, կորուստներ, հոգեբանական բարդ գործընթացներ և այլն: Նա նշեց, որ մենք պատրաստ չէինք դիմակայելու այն ծանր փորձությանը, որն իր հետ բերեց Արցախյան 44-



օրյա սարսափելի պատերազմը: Միայն մեր ոգու կորովի շնորհիվ կարող ենք հաղթահարել այս դժվարին իրավիճակը, վերագտնել մեզ ու շարունակել ապրել ապագայի վառ հույսերով:

Մեզ համար արժեքները դասավորված են այլ տրամաբանությամբ, մենք ստեղծարար ժողովուրդ ենք, հետևաբար պետք է մեզնից հեռու վանենք պատերազմը, որքան որ հնարավոր է: Պատերազմական դժվարությունները հաղթահարելու համար անհրաժեշտ են այսպիսի միջոցառումները, որ խոսվի այդ մասին, վերհիշվի, իմաստավորվի, ու կգա թեթևացումը՝ իհարկե բացողություններն ու ձեռքբերումները դասավորելով:

Ահա թե ինչ պատմեց հեղինակի գործընկեր Արմինե Գրիգորյանը. «2024-ի սեպտեմբերի 27-ն էր... Ինձ համակել էին 2020 թվականի 44-օրյա պատերազմի հետպատերազմյան ծանր, անորոշ ու անմեկնելի զգացողությունները (Նախիջևանի ճգնաժամի հետ մենք ընդամենը մի քանի շաբաթվա ծանոթներ էինք), բացում են հեռախոս և կարդում մի հերոսական պատմություն այն մասին, թե ինչպես է լեյտենանտը մարտի ժամանակ իր մարմնով փրկում շարքային զինվոր Սարգսին, իսկ ինքը զոհվում է: Այդ պահին մի անբացատրելի զգացողություն ապրեցի, մանավանդ երբ տեսա արծվի սլացքը՝ վեհ ու բարձր, ու այն դաջվեց հոգուս մեջ...»

Մի քանի ամիս անց պարոն Հովսիկյանն ինձ ուղարկում է մի հատված այդ գրքից, և, ո՛վ, զարմանք, ես այդտեղ հանդիպում եմ ինձ ծանոթ կերպարներին՝ շարքային Սարգսին ու Լեյտենանտին, նաև Արծվին... Որպես գիրքն ամբողջությամբ ընթերցած մարդ, պիտի խոստովանեմ, որ երբ բացում ես այն, անձնավորված կերպարի պես խոսել է սկսում քեզ հետ՝ պատմելով իր ցավի, հերոսական պայքարի դրվագների ու հաղթանակի մասին, իր հույսի ու հավատի մասին... Այդ անձնավորված կերպարը հենց մեր Հայրենիքն է, որը մեզ հետ խոսում է՝ գրքի առաջին էջից սկսած մինչև

ավարտ: Դա բոլորիս Հայրենիքն է, որը մեզ ուղեկցում է դեպի Արարատ...»:

Վերջում խոսքը տրվեց Նախիջևանի Հովսիկյանի տիկնոջը՝ Արուսյակ Հովսիկյանին, որը, ի դեպ, գրքի սրբագրիչն է. նա պատմեց հետևյալը.

«Անկեղծ ասած, երեկ մտածում էի, որ մեզ չի հաջողվելու իրականացնել այսօրվա միջոցառումը հասկանալի պատճառով, բայց, փառք Աստծո, ամեն ինչ բարեհաջող վերջացավ: Պիտի ասեմ, որ թեման բոլորիս ծանոթ ու հարազատ է, բոլորս էլ մեր մաշկի վրա զգացել ենք դրա ծանրությունը: Սրբագրելու ընթացքում ինձ պահում էի անաչառ դատավորի պես: Երբեմն-երբեմն այնքան էի տարվում թեմայով, որ ինքնամոռաց ընթերցում էի՝ առանց սրբագրելու, ու ինձ բռնացնում ընթերցողի կարգավիճակում, մորից հետ դառնում ու սրբագրում: Երկի դա խոսում է այն մասին, որ գիրքը ստացվել է, և մույն կերպ կընկալվի ընթերցողի կողմից: Այստեղ խոսք եղավ կտրուկ անցումների մասին: Պիտի խոստովանեմ, որ գեղարվեստականից վավերագրականի անցումներն այնքան «փափուկ» են, որ համոզվում եմ՝ դրանք ևս գեղարվեստական հնարներ են, որին դիմել է Նախիջևան: Շնորհակալություն բոլորիդ, որ միշտ նրա կողքին եք ձեր աջակցությամբ»:

Հանդիսատեսի հետ ծավալված զրույցի ընթացքում այն հարցին, թե ինչ է խորհրդանշում 35-ը, Ն. Հովսիկյանը պատասխանեց, որ գիրքը Արցախի 35 տարիների հերոսական մաքառումների պատմությունն է, իսկ մյուս 35-ը, որը բացահայտվում է գրքի վերջին էջերում, հեղինակը խնդրեց թույլ տալ՝ չբացելու փակագծերը, այլ թողնել ընթերցողի մտքին:

Ընթերցասեր հասարակությանը ևս մի հնարավորություն է տրվում՝ այս գրքով ճիշտ ընկալելու այն բոլոր զարգացումները, որ հանգեցրին մեր չքնաղ երկրամասի՝ Արցախի ծանր կորստին: Սա ոչ միայն արցախցու, այլև ողջ հայության մեծ ցավն ու միաժամանակ կորսված արժանապատվության խնդիրն է, որը պիտի անհամգտացնի անխտիր բոլորին:

Բոլոր ելույթ ունեցողներն էլ ստեղծագործական նորամուտ նվաճումներ մաղթեցին Նախիջևանի Հովսիկյանին:

Սուրայա ՂԱԶԱՐՅԱՆ

ՄՇԱԿՈՒՅԹ

ԱՐՅԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԶԱՋ ՆՎԱԳԱՆՄԻ ՇԱՄԵՐԳԸ

Յուրաքանչյուր անգամ, երբ տեղեկանում եմ, որ արցախյան մշակութային որևէ խումբ հանդես է գալու երևանյան բեմերում, և ՀՀ մարզերում լինելու են մշակութային միջոցառումներ, որոնց մասնակից են նաև արցախցիներ, փորձում եմ անպայման ներկա լինել, լուսաբանել կատարվածը: Կարևոր է նաև, որ կան անհատներ, կազմակերպություններ, որոնք աջակցում են արցախյան մշակութային խմբերին՝ շարունակելու իրենց գործունեությունը երևանում և ՀՀ մարզերում:

Արցախում ծնված մշակութային խմբերից է Արցախի պետական ջազ նվագախումբը, որի համերգը կայացավ 2026թ. հունիսի 17-ին Երևանի ճարտարապետների միության դահլիճում՝ վերածվելով ջազային տոնի: Համերգի գլխավոր հովանավորն էր Հայ բարեգործական ընդհանուր միությունը (ՀԲԸՄ-AGBU Armenia), նվագախմբի գործընկեր՝ «Դիալոգ» հասարակական կազմակերպությունը՝ Յուրի Նավոյանի նախագահությամբ: Տիգրան Սուլյանի ղեկավարությամբ Արցախի պետական ջազ նվագախումբը ներկայացրեց հայկական և արտասահմանյան ժամանակակից ջազային և հիփ-հոփ ստեղծագործություններ, ինչպես նաև հեղինակային ստեղծագործություններ, որոնք ավելի շատ էին: Նվագախմբի ղեկավար Ս. Սուլյանը, մինչև համերգը սկսելը, տեղեկացրեց՝ իրենք նախընտրում են առավել շատ կատարել սեփական ստեղծագործություններ՝ շեշտը դնելով հեղինակային և ժամանակակիցների գործերի վրա: Անդրադարձավ նվագախմբի ստեղծման պատմությանը:



Արցախի պետական ջազ նվագախումբը կազմավորվել է Ստեփանակերտում 2003 թվականին: Մոտ երկու տասնամյակ, դաշնակահար Տիգրան Լալայանի ղեկավարությամբ, նվագախումբը համերգներով հանդես է եկել Ստեփանակերտում, Երևանում, արտերկրում, մասնավորապես՝ Ռուսաստանում: Ազատագրված ու անկախացած Արցախում այս նվագախումբն իր տեղն ունի մշակութային խմբերից:

Սա կարևոր էր պատերազմից և դրա ողբերգական հետևանքներից հետո: Շնորհիվ յուրահատուկ ծրագրի և երաժշտության ինքնատիպ մատուցման՝ Ս. Սուլյանի ղեկավարած նվագախումբը կրկին ոտքի կանգնեց, ձեռք բերեց մոր ճանաչում և սեր: 2023թ. սեպտեմբերի վերջերին տեղի ունեցած ողբերգություններից հետո, ինչպես արցախյան բոլոր մշակութային կառույցները, այնպես էլ այս նվագախումբը Երևանում էր փորձում շարունակել իր գործունեությունը: Մի քանի անգամ արդեն տեղեկացրել ենք՝ Մոսկվայում գործող «Դիալոգ» հասարակական կազմակերպության աջակցությամբ արցախյան մի շարք մշակութային խմբեր վերակազմավորվել և սկսել են իրենց գործունեությունը:

Արդեն երկու տարի է՝ «Դիալոգ»-ն աջակցում է նաև Արցախ-ջազ նվագախմբին, որը 2024 թվականին Երևանում հիմնադրել է Արցախի պետական ջազ նվագախմբի նախկին ղեկավար Տիգրան Լալայանը: Մոսկվայից և Երևանյան մի քանի համերգներից հետո Արցախ-ջազը մայիսի 25-ին ելույթ ունեցավ Արմավիր քաղաքում: Եվ այժմ էլ «Դիալոգ»-ի ղեկավարն աջակցեց նաև Արցախի պետական ջազ նվագախմբին, որը շարունակում է իր գործունեությունը՝ համալրվելով

նվաճողներին: Սա կարևոր էր պետական կոնսերվատորիայի ուսանողներով, շրջանավարտներով: Նվագախմբի առաջին ելույթը տեղի է ունեցել 2026թ. մայիսի 6-ին Երևանի Կոմիտասի ան-



վան պետական կոնսերվատորիայի դահլիճում: Եվ արդեն երկրորդ համերգը, որն ավարտվեց խորհրդանշական «Վերադարձ» անվանումով ստեղծագործության կատարմամբ: Ս. Սուլյանն ասաց՝ ստեղծագործությունը, որի հեղինակն ինքն է, գործիքավորողը՝ Արթուր Իսրայելյանը, բեմում հնչում է առաջին անգամ՝ իր մեջ կրելով հայրենիք վերադարձի հույսը: Դահլիճում հանդիսատեսների մեծ մասն Արցախից էր, ու կարոտը, նույն նվագախմբի ստեփանակերտյան համերգների հիշողությունները տուն վերադարձի կանչ էին:

Համերգին որպես հատուկ հյուրեր էին Երևանի ջազային և երգարվեստի հայտնի արտիստներ՝ Ժաննա Դավթյանը (վոկալ), Հայկ Գրիգորյանը (շեփոր), Սոֆա Շիրոյանը (վոկալ) և Նարեկ Հովսեփյանը (A Chilla): Կոմիտասի հավաքագրած «Փարուն ա» ֆոլկ ստեղ-

ծագործությունը հնչեց Բերքլիի ուսանող, թավջութակահարուհի Մարիա Արիստակեսյանի գեղեցիկ մշակմամբ: Համերգի ընթացքում եղան այլ ակնկալներ ևս: Երգչուհի Ժաննա Դավթյանը հանդես եկավ մի քանի երգով, առանձնակի ջերմությամբ ու չղադարող ծափողջյուններով ընդունվեց Մարտին Վարդապետյանի «Քո լավ աչքերից» ստեղծագործության կատարումը, որը վոկալիստուհին ներկայացրեց սեփական ընկալման միջով: Հան-

դիսատեսին մեծ ոգևորություն պարգևեց նաև երիտասարդ երգչուհի Կիրա Ավաբեկյանի ելույթը: Համերգի ավարտից հետո Տիգրան Սուլյանը կարևորեց ՀԲԸՄ-ի դերը, որ միշտ եղել է իրենց կողքին: «Միայն պետք է արտասանել Արցախ անունը, և նրանք պատրաստ են օգնել», - հավելեց նա: Հատուկ շնորհակալություն հայտնեց նվագախմբի մոր գործընկերոջը՝ Մոսկովյան «Դիալոգ» ՀԿ-ին՝ ի դեմս նրա ղեկավար Յուրի Նավոյանի, ինչպես նաև «SolarOn» ընկերության հիմնադիր Արթուր Ավաբեկյանին:

Համերգից հետո էլ շարունակվում էր շփումը հանդիսատեսների և երաժիշտների հետ: Հերթական առիթն էր, որ հանդիպեցին արցախցիները միմյանց հետ. կարոտ, հուզմունք, ոգևորություն ու ամենակարևորը՝ ՀԱՎԱՏ տունդարձի:

Զ. ԸՈՔՈՑԱՆ

“РЕКВИЕМ ПО КОРНЕВОЙ СИСТЕМЕ”

Ես հայ չեմ, բայց ես ինձ դարաբաղի եմ համարում...

Սերգեյ Օգոլցով

«Հայոց աշխարհաժողով» շարժումը մի հրաշալի նախաձեռնություն էր կազմակերպել Երևանի «Թեքեյան» մշակութային կենտրոնում՝ ընթերցատեր հասարակության ուշադրությունը հրավիրելով ռուս գրող Սերգեյ Օգոլցովի՝ վերջերս հրատարակած «Реквием по корневой системе» գրքի շնորհանդեսին:

Սերգեյ Օգոլցովը այն քաթիվ դարաբաղցիներից է, որը մնաց ապրելու 2023 թվականի Արցախի հայաթափումից հետո:

Ինչո՞ւ և ի՞նչ նպատակով նա մնաց Ստեփանակերտի իր տանը, ինչպե՞ս էին նրան վերաբերվում ադրբեջանցիները, ու արդյո՞ք քաղաքը, իրոք, բնակեցրել էին. այս և այլ հարցերի պատասխանում է հենց ինքը՝ ակամատեսը:

Երեսուներեք տարեկան էր, որ Արևմտյան Ուկրաինայից՝ Իվանո-Ֆրանկովսկից, տեղափոխվեց Արցախ և 1987 թվականին բնակություն հաստատեց Ասկերանի շրջանի Խաչեն գյուղում, որն իր համար ամենադրախտային անկյունն էր: Հայրը

ռուս էր, մայրը՝ ուկրաինացի: Սովորել է մանկավարժական ինստիտուտի անգլերենի բաժնում: Ընդդիմադիր հայացքների համար հետապնդվել է խորհրդային տա-



րիներին: Հետո դարձել է քարտաշ, որմնադիր՝ չորրորդ կարգի: Ճակատագրի բերումով է հայտնվել Ղարաբաղում ու վկա դարձել այդտեղ կատարվող իրադարձություններին:

2020-ից առաջ Քաշաթաղի Եզնագոմեր գյուղում իր ձեռքով տուն է կառուցել ու ապրել այնտեղ: Ընկերների ու հարազատների հորդորով 2020-ից հետո տեղափոխվել է Ստեփանակերտ ու միացել իր ընտանիքին: Օգոլցովի գլխով շատ բաներ են անցել, բայց որ կոտեներ Արցախը հայաթափված, մտքով անգամ չէր անցել: Ինչ տեսել ու զգացել էր Ղարաբաղում, այն էլ գրել է այն ժամանակ, երբ այլևս այնտեղ հայ չէր մնացել: Հայաթափումից հետո՝ ութ ամիս շարունակ, գրողը ապրել է այնտեղ: Լսել է հայրենի գյուղը լքողների ողբը ու տեսել գաղթի ճանապարհը բռնած անվերջանալի քարավանները, զգացել է հայաթափված գյուղերի անշնչությունը ու վերապրածը համձնել թղթին՝ վերնագրելով այն «Реквием по корневой системе» («Արմատային համակարգի եղերերգը») խորհրդանշական անվանումով:

«Հայոց աշխարհաժողով» հայրենատիրական շարժման անդամ Արտաշես Բախշիյանը պատմում է, որ պատահական է հանդիպել ազգությամբ ռուս Սերգեյ Օգոլցովին, լսել նրա պատմությունը և աջակցել գրքի հրատարակությանը: Սերգեյի ճակատագիրը նման է արցախցի 120

հազար հայերի ճակատագրին: Գիրքը նրա անձնական վկայությունն է հայրենագրկված արցախցիների ապրած ցավի ու դաժան իրականության մասին, որը փաստում է այն ճշմարտությունը, որ ադրբեջանցիների հետ հնարավոր չէ բարիդրացիությամբ ապրել: Համակեցությունն անհնարին է:

Արտաշես Բախշիյանն ավելացրեց, որ շատերն այն կարծիքին էին, որ մնալ գրքի ժամանակը չէ, սակայն ինքը համառել է ու պնդել հակառակը: Գիրքը շուտով լույս կտեսնի նաև հայերեն ու անգլերեն:

Գիրքը եռամսա է. առաջին մասը պատմում է Արցախի շրջափակման, սովի, հացի հերթերի մասին... Երկրորդում մինչև 2023-ի տեղահանությունը եղած իրադարձություններն են՝ մարդկանց ապրումները, ինչպես են իրերը դասավորում, նկարներն այրում, մտորում կատարվածի մասին: Երրորդ մասը պատմում է ադրբեջանցիների հետ շփումների մասին:

«Ես հայ չեմ, բայց ես ինձ դարաբաղի եմ համարում,- արցախյան անվարժ բարբառով ասում է Սերգեյ Օգոլցովը երդումի նման,- Արցախը իմ սրտում է...»:

ՀԻՇԵՆՔ ԵՎ ԳՆԱՀԱՏԵՆՔ

ԱՆՍԱՀԱՅԱՆ ԱՐՅԱՆԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՎԵՐՋԻՆ ՄԱՐՏՈՒՄ

Ի նն ամիս 120 000 մարդու շրջափակած ու սովի մատնած աղբյուրները 2023թ. սեպտեմբերի 19-ի կեսօրին անցան լայնածավալ հարձակման Արցախի բոլոր ուղղություններով: Աղբյուրների գինուժը նախ կտրեց կապը պաշտպանական դիրքերի ու բնակավայրերի միջև, որպեսզի զինվորականները չկարողանան բնակիչներին տեղեկացնել հարձակումների մասին, հետո թիրախավորեց խաղաղ բնակչությանը հենց այն ժամին, երբ երեխաները դպրոցներում ու մանկապարտեզներում էին:

Հարձակման առաջին իսկ ժամերին հիվանդանոցները լցվեցին վիրավորներով, այդ թվում՝ երեխաներ: Կրակի տակ էին վիրավորներին մի կերպ տեղափոխում հիվանդանոց: Բոլակայի պատճառով Արցախում դեղերի պակաս կար:

Միջազգային հանրությունը «ցավում էր», «մտահոգված էր», «կոչեր էր անում»: Արցախը պաշտպանության փոքրաթիվ բանակով մնաց մեն-մենակ Աղբյուրների բանակի առաջ: Չմայած Մայր Հայաստանի Սահմանադրության մեջ գրված էր, որ Հայաստանի Հանրապետությունը Արցախի Հանրապետության անվտանգության եւ անկախության երաշխավորն է, 2023թ. սեպտեմբերի 19-ին պարզվեց, որ Երեւանը մտադիր չէ ներքաշվել ռազմական գործողությունների մեջ՝ հանուն Արցախի: Մինչ աղբյուրների հրթիռներ էին պայթում Ստեփանակերտում, հայկական ոստիկանությունը Երեւանում լուսաձայնային նռնակներ պայթեցրեց հրապարակում հավաքված այն քաղաքացիներին ցրելու համար, որոնք լուր չունեին Արցախում մնացած հարազատներից ու իրենց հարցերին պատասխաններ էին փնտրում Հայաստանի կառավարության դիմաց: Ռազմական ագրեսիայի սկսվելուց միայն 2,5 ժամ հետո Երեւանը դատապարտեց Աղբյուրների ագրեսիան:

Արցախի բանակը հերոսաբար մարտնչել է՝ մնալով մենակ, ինն ամիս շրջափակման մեջ սովամահ լինելով: Արցախցիները հերոսություն են ցուցաբերել՝ լքված ու դավաճանված լինելով ողջ աշխարհի կողմից:

Շրջափակման 283-րդ, ինտենսիվ հրետակոծության 2-րդ օրը, մինչ Երեւանն ու Մոսկվան իրար էին մեղադրում պատահածի համար, Ստեփանակերտը ստիպված էր համաձայնվել ծանր զինուժնե-րին:

Վերջին ու ամենածանր մարտում Արցախը տվեց 223 զոհ, ավելի քան երկու տասնյակը՝ խաղաղ բնակիչ, նրանցից 5-ը՝ երեխա, 11 մարդ դեռ անհետ կորած է: Արցախի պաշտպանության համար մղված վերջին մարտում իրենց կյանքն են զոհել զինծառայողներ Նվեր Ավանեսյանն ու Անդրանիկ Ավագյանը:



Ավանեսյան Նվեր Արարատի

Ծնվել է 1987թ. դեկտեմբերի 7-ին Ստեփանակերտում: Հայրը Արցախյան առաջին պատերազմի մասնակից էր, զոհվել էր 1994 թ. մայիսի 26-ին:

1995-2005 թթ. Նվերը սովորել է Ստեփանակերտի Խ. Աբովյանի անվան հ.1 դպրոցում: 2000թ. սովորել է Հ. Գյուրջյանի անվան արվեստի դպրոցի գեղարվեստական բաժնում: 2007թ. գորացրվել է բանակից եւ նույն թվականին անցել է պայմանագրային զինվորական ծառայության (ՌԵԲ-ում): Ծառայությունը համատեղել է ուսման հետ: 2009-2013 թթ. սովորել է Հայաստանի ազգային ազրարային համալսարանի Ստեփանակերտի մասնաճյուղում՝ «Ազրարային արտադրության էկոնոմիկա եւ կառավարում» բաժնում: 2009թ. պարգևատրվել է պատվոգրով՝ Ջորամասի տարեկան տոն օրվա կապակցությամբ՝ հայրենիքին մատուցած ծառայությունների եւ մարտական պատրաստության բարձր ցուցանիշների համար: 2013թ. եւս պարգևատրվել է: 2016թ. մասնակցել է քառօրյա պատերազմին:

2017 թ. վերապատրաստման է մեկնել Երեւան եւ որպես կապավոր, զինվորական կոչումով՝ ավագ լեյտենանտ, վերադարձել է, ծառայությունը շարունակել Հադրութ քաղաքում:

Այնուհետեւ նա տեղափոխվել է ԿՊՇ զորամաս՝ Ստեփանակերտ: 2020թ. սեպտեմբերի 27-ին առավոտյան մեկնել է ռազմաճակատ: Մարտական դիրքը Հադրութում էր: Մարտնչել էր անձնվիրաբար՝ հանուն հայրենիքի: Սակայն հոկտեմբերի 13-ին առավոտյան ժամը 8:00-ին նա վիրավորվեց ողնաշարի գոտկային հատվածում: Իսկ նույն օրը ժամը 15:00-ին ծնվեց իր առաջնեկը՝ դուստրը:

Չմայած նրան, որ ողնաշարում բեկորներ են մնացել եւ չի վիրահատվել, այնուամենայնիվ այդպես էլ շարունակել է ծառայությունը:

Նվեր Ավանեսյանը պարգևատրվել է «Անբասիր ծառայության համար» 1-ին աստիճանի եւ 2-րդ աստիճանի մեդալներով: Ինչպես նաեւ ՀՀ ԶՈՒ-ի 20-ամյակի «Հորելյանական մեդալ»-ով:

Հրամանատար, ավագ լեյտենանտ Նվեր Ավանեսյանը դիրքում էր, երբ 2023թ. սեպտեմբերի 19-ին սկսվեց պատերազմը, եւ այդ նույն օրը նա անմահացավ, կյանքը զոհեց հանուն հայրենիքի (35-րդ դիրքում):

Հուղարկավորված է «Եռաբլուր» զինվորական պանթեոնում: Ամուսնացած էր, ունի երկու մանկահասակ դուստր:

Ավագյան Անդրանիկ Իվանի



Ծնվել է 1994 թ. օգոստոսի 13-ին Ստեփանակերտում: 2001թ. ընդունվել է Ստեփանակերտի Վ. Ջեմալիյանի անվան միջնակարգ 11-րդ դպրոցը: 2012թ. դպրոցն ավարտելուց հետո գորակոչվել է բանակ, իր դիմումի համաձայն ծառայել է Մատաղիսում՝ որպես հետախույզ, հեռաչափող:

Կամավոր մասնակցել է քառօրյա պատերազմին: Եղել է Մարզիկու զյուլի մոտակայքում:

2016թ. ընդունվել է Ստեփանակերտի «Գրիգոր Նարեկացի» համալսարանի ֆիզկուլտուրայի բաժինը:

2019-2022 թթ. զբաղվել է տարբեր աշխատանքներով:

2022թ. անցել է ծառայության ՊԲ զորամասերից մեկում:

Անմահացել է 2023թ. սեպտեմբերի 19-ին: Հուղարկավորված է Ստեփանակերտի Եղբայրական գերեզմանոցում:

Ամուսնացած չէր:

2023 թվականի սեպտեմբերի 19-ին Արցախի դեմ Աղբյուրների լայնածավալ ագրեսիայի հետեւանքով զոհված զինծառայողները Հայաստանի Հանրապետության պաշտոնական պետական մարմինների կողմից զանգվածային կամ առանձին կարգով հետմահու չեն պարգևատրվել: Հայաստանի Հանրապետության նախագահի կողմից հետմահու պարգևատրումներ սովորաբար տեղի են ունենում պետական տոների առթիվ՝ համապատասխան գերատեսչությունների կամ Վարչապետի միջնորդության հիման վրա: Սակայն սեպտեմբերի 19-20-ի զոհերի մասով համընդհանուր պարգևատրման պաշտոնական հրամանագիր դեռեւս առկա չէ:

Ներկայացնելով 2023 թվականի սեպտեմբերի 19-ին Արցախի դեմ Աղբյուրների լայնածավալ ագրեսիայի հետեւանքով հերոսաբար զոհված զինծառայողներին՝ նպատակ ունենք հանրությանն ավելի ճանաչելի դարձնել մեր հերոսներին, որոնք, անշուշտ, արժանի գնահատական պետք է ստանան՝ համընդհանուր ջանքերով պատմական արդարությունը վերականգնելուց հետո:

Սոնյա ԱՎԱԳՅԱՆ

“РЕКВИЕМ ПО КОРНЕВОЙ СИСТЕМЕ”

5 Գրողը խոստովանում է, որ դժվար էր և՛ շրջափակման, և՛ պատերազմի օրերին, բայց ամենացավոտը Երևան մեկնող վերջին ավտոբուսը ճանապարհելուց հետոն էր: Նա այդ ավտոբուսներից մեկով ճանապարհել էր կնոջը՝ Սաթիկին, ու քայլում էր ուրվական դարձած քաղաքով:

Հայաթափումից ամիսներ անց՝ 2024-ին, երբ աղբյուրների առաջարկել են Աղբյուրների քաղաքացիությունը ընդունել, իրեն դարաբաղցի համարող գրողը հրաժարվել է ու տեղափոխվել Երևան՝ միավորվելով ընտանիքի հետ:

«Հայոց աշխարհաժողով» շարժման անդամ Արտաշես Բախչիյանն այն կարծիքին է, որ գրքի նարատիվները համահունչ են այսօրվա հայ քաղաքական իրականության մեջ շրջանառվող այն տեսակետներին, թե կարելի է աղբյուրներից հետ ապագա կառուցել: Գրքի հրատապ տպագրությունը նպատակ ունի մեր քաղաքացիներին ևս մեկ անգամ խորհելու հնարավորություն տալ ընտրություններից առաջ և լուրջ քայլեր կատարել:

«Կաճառ» գիտական կենտրոնի տնօրեն, պատմաբան Միեր Հարությունյանը նշեց, որ գիրքը հեշտությամբ չի կարդացվում՝ ոչ թե ժանրային առանձնահատկություններով պայմանավորված, այլ նրա համար, որ նորից պահանջվեց վերապրել այն ծանր իրականությունը, որ պատել էին արցախցիներին, որոնք թողնված էին բախտի քմահաճույքին: Գիրքը բարդ է այն առումով, որ շատերս դեռ չենք հասցրել կատարվածը անցկացնել մեր սրտի պրիզմայով ու լրիվությամբ գիտակցել եղածը: Այն ստեղծագործական կամ հուշագրական երկ չէ. գիրքը միաժամանակ վկայություն է, հոգեբանական փաստաթուղթ, մարդկային դիմադրության յուրօրինակ տարեգրություն: Արցախի մասին շատ պատմություններ են գրվել, սակայն Օգոլցովի գրքի արժեքն այն է, որ չի պատմում պատերազմի կամ դիվանագիտության մասին: Այն պատմում է մարդու մասին, որը կանգնած է հացի հերթում, մարդու, որը շրջափակման պայմաններում փորձում է մի կտոր հացը բաժանել երկու օրվա միջև: Մարդու, որը հասկանում է, որ փլուզվում է իր աշխարհը, բայց շարունակում է մտածել ու գրի առնել: Գիրքը թույլ է տալիս մեզ տեսնել շրջափակումը ոչ թե վիճակագրությամբ, այլ մարդկային ճակատագրերի մակարդակով:


Հեղինակը գրքում շատ է օգտագործել հեզմանքը, սարկազմը՝ որպես թեմայի անցումների միջոց, որով էլ պահպանել է մարդու ազատ մտածելու կարողությունը անգամ այդպիսի անմարդկային պայմաններում: Սրանք հոգեբանական պաշտպանության ձևեր են: Կարծես հեղինակը փորձում է ասել. «Դուք կարող եք վերցնել իմ քաղաքը, իմ տունը, բայց դեռ չեք վերցրել իմ մտածելու իրավունքը»: Գիրքը գրվել է ոչ թե խաղաղ, հանգիստ պայմաններում, այլ օկուպացված քաղաքում, որտեղ ամեն ինչ անորոշության մշուշով է պատված: Նման պայմաններում գրելը դիմադրության ու գոյատևման միջոց է, հոգեկան հավասարակշռությունը պահպանելու հնար:

Իսկ ի՞նչ կատարվեց գաղթից հետո... Դրա պատասխանը ևս տալիս է Օգոլցովի գիրքը, որը հետագայում ծառայելու է որպես պատմական սկզբնաղբյուր:

«Եթե փաստաթղթերը պատմում են գաղթի վիճակագրությունը, ապա նման գրքերը պատմում են, թե ինչ է զգացել մարդը: «Реквием по Корневой системе»-ը ոչ միայն Արցախի կորստի, այլև հայրենիքի մասին է, գիրք՝ մարդկային արժանապատվության մասին, գիրք՝ ներքին ազատության մասին, այն մասին, թե ինչպես կարելի է կորցնել ամեն ինչ, բայց չկորցնել մտածելու, հիշելու և պատմելու կարողությունը», - իր խոսքն այսպես ավարտեց Միեր Հարությունյանը:

Անդրանիկ Ռոմանովը հատվածներ կարդաց Օգոլցովի գրքից: Ելենա Շուկաևան շնորհակալություն հայտնեց այն մարդկանց, որոնք աջակցեցին գիրքը տպագրելու գործընթացին:

Սուրյա ԴԱԶԱՐՅԱՆ



ՎԵՐՋԻՆ ԷՋ

ՄԱՐԶԱԿԱՆ ԱՆՅՈՒԴԱՐՁ

Վերջերս Երեւանում՝ «Դինամո» մարզադահլիճում կայացավ տարվա ամենասպասված իրադարձություններից մեկը՝ Հայաստանի խառը մենամարտերի (MMA) պաշտոնական առաջնությունը, որը մեկ հարթակում հավաքեց Հայաստանի լավագույն մարզիկներին՝ տարբեր քաշային եւ տարիքային կարգերում: Մրցումներն աչքի ընկան բարձր մակարդակով, լարված մենամարտերով եւ հանդիսատեսի մեծ հետաքրքրությամբ, իսկ մարզադահլիճում տիրում էր իսկական մարզական տոնական մթնոլորտ:

Առաջնությանը մասնակցեցին մարզիկներ Հայաստանի տարբեր մարզերից եւ ակումբներից՝ ցուցադրելով ոչ միայն ֆիզիկական պատրաստվածություն, այլեւ մարտավարական բարձր ունակություններ եւ կամքի ուժ: Երիտասարդ շատ մարզիկների համար սա կարելու հնարավորություն էր իրենց կարողությունները դրսևորելու եւ ազգային հավաքականի ուշադրության կենտրոնում հայտնվելու համար:



Ա. Աղաբալյան, մուայթայ

Մրցաշարի կազմակերպիչները նշում են, որ առաջնության նպատակն է զարգացնել MMA մարզածելը Հայաստանում, խթանել երիտասարդների հետաքրքրությունը սպորտի նկատմամբ եւ ծելավորել միջազգային մակարդակով մրցունակ մարզիկներ: Առանձնահատուկ ուշադրություն է դարձվել նաեւ պատանիների եւ երիտասարդների մասնակցությանը, քանի որ հենց նրանք են հայկական MMA-ի ապագան:

Հաղթողները հնարավորություն են ստանում ներկայացնելու Հայաստանը միջազգային խոշոր մրցաշարերում՝ Աշխարհի պատանիների առաջնություն, Աշխարհի գավաթի խաղարկություն, Աշխարհի երիտասարդների եւ մեծահասակների առաջնություններ, միջազգային հեղինակավոր մրցաշարեր:

Հայաստանի առաջնությունը եւս մեկ անգամ ցույց տվեց, որ խառը մենամարտերը երկրում շարունակում են ակտիվ զարգանալ, իսկ հայ մարզիկներն ունեն մեծ ներուժ միջազգային ասպարեզում բարձր արդյունքներ գրանցելու համար:

Լեւոն Հայրապետյանի անվան սամբոյի եւ ծյուդոյի օլիմպիական մանկապատանեկան մարզադպրոցի սաները գրանցել են հերթական հաջողությունը «Զյուդոյի Բալթյան գավաթում»: 2026 թվականի հունիսի 5-9-ը Լեհաստանի Գդինիա քաղաքում կայացել է «Judo Baltic Cup» միջազգային մրցաշարը, որին մասնակցել են ավելի քան 2200 ծյուդոիստներ աշխարհի 10 երկրներից:

Մրցաշարին մասնակցել են նաեւ Լեւոն Հայրապետյանի անվան սամբոյի մարզադպրոցի սաները՝ մարզիչ Իվան Ազիզբեկյանի գլխավորությամբ՝ գրանցելով բարձր արդյունքներ: Մասնավորապես, Արման Պարսիյանցը մինչեւ 18 տարեկանների պայքարում 55 կգ քաշային կարգում գրանցել է 6 հաղթանակ եւ դարձել մրցաշարի հաղթող՝ նվաճելով 1-ին տեղը:

Արման Պարսիյանցը մինչեւ 21 տարեկանների մրցապայքարում եւս հաջող է հանդես եկել՝ 55 կգ քաշային կարգում զբաղեցնելով 3-րդ տեղը՝ գրանցելով 3 հաղթանակ: Մարզիկ Կարեն Վերդիյանը մինչեւ 15 տարեկանների պայքարում 81 կգ քաշային կարգում զբաղեցրեց 7-րդ հորիզոնականը:

Արդյունքում Հայաստանի թիմը զբաղեցրել է 3-րդ տեղը թիմային հաշվարկով: Մուայթայի դպրոցականների անդրանիկ աշխարհի առաջնությունը անցկացվել է հունիսի 16-ից 26-ը Մալայզիայի մայրաքաղաք Կուալա Լումպուրում՝ Մեդեթա հրապարակում: Այս պատմական սպորտային իրադարձությունը կազմակերպվել է Մուայթայի սիրողական միջազգային ֆեդերացիայի (IFMA) եւ Դպրոցական սպորտի միջազգային ֆեդերացիայի (ISF) համագործակցությամբ:

Հայաստանի Մուայթայի հավաքականը՝ ֆեդերացիայի նախագահ եւ գլխավոր մարզիչ Ալեքսան Աղաբալյանի գլխավորությամբ հունիսի 16-ին մեկնել էր Մալայզիա՝ մասնակցելու աշխարհի առաջնությանը՝ այս հեղինակավոր ստուգատեսին եւ ներկայացնելու մեր երկիրը միջազգային դպրոցական ասպարեզում: Մինչեւ 16 տարիքային խմբում 56 կգ քաշային կարգում Արայիկ Բրուտյանը նու-



Ի. Ազիզբեկյան, ծյուդո

կառնում հաղթեց մալայզացի մարզիկին եւ անցավ եզրափակիչ: Գոռ Հակոբյանը մինչեւ



Արամ Մուսիյան

18 տարիքային խմբում 71 կգ քաշային կարգում նուկառնում հաղթելով ուզբեկ մարզիկին՝ անցավ եզրափակիչ: Արայիկ Բրուտյանը եզրափակչում նուկառնում հաղթեց ուզբեկ մրցակցին եւ դարձավ չեմպիոն: Գոռ Հակոբյանը զբաղեցրեց 2-րդ տեղը:

Վրաստանի Բաթումի քաղաքում անցկացվող 8-12 տարեկան պատանիների եւ աղջիկների շախմատի աշխարհի գավաթին, որը մեկնարկել էր հունիսի 16-ին, արցախցի Արամ Մուսիյանը՝ Արցախի հերոս հրամանատար Մերուժան Մուսիյանի թոռը, ներկայացնելով Հայաստանի Հանրապետությունը, հաղթել է թուրք մրցակցին շախմատի աշխարհի գավաթի առաջնությունում:

ՄՊՈՐՏԸ ԵՎ ԵՐԵՒԱՆԵՐԸ

7 Մենք մարզիկ նշանակության մասին եւ որ՝ նրան պետք է լսել: Իսկ ամենակարեւորը մոտիվացիան է. բերեք օրինակներ որեւէ մուլտիպլիկացիոն հերոսի վրա, հայտնի ֆուտբոլիստի, ճանաչված չեմպիոնի կամ երկրպագվող որեւէ կերպարի: Երեխան հստակ պետք է իմանա, թե ինչու է դա նրան պետք:

Սպորտով զբաղվելն ակտիվ զարգացնում է երեխայի մեջ այնպիսի արժեքավոր հատկություններ, ինչպիսին են ինքնաձգտապաստությունը, անհատականությունը, ընդհանուր լեզու գտնելու կարողությունը եւ կոլեկտիվում ինքնադրսևորվելը: Ինչպես նաեւ, սպորտը բարձրացնում է ինքնագնահատականը եւ կոփում կամքը:

Գիտնականներն ապացուցել են, որ սպորտով զբաղվող երեխաների առաջադիմությունը դպրոցում ավելի բարձր է, քան այն երեխաներինը, որոնք սպորտով չեն զբաղվում:

Մարզվող երեխաները գրեթե ժամանակ չեն ունենում անօգուտ զբաղմունքների համար:

Պարբերաբար մարզվելն ապահովում է երեխայի առողջ քունը: Դրա շնորհիվ օրգանիզմում արտադրվում են էնդորֆին հորմոններ՝ ազատելով երեխայի օրգանիզմը տարբեր մտահոգություններից եւ սթրեսներից:

Սպորտը դեպի քաջառողջություն տանող ուղիղ ճանապարհն է: Սպորտով զբաղվող երեխաների օրգանիզմի դիմադրողականությունը բարձր է, նրանք հազվադեպ են հիվանդանում: Մարզումների ընթացքում օրգանիզմի բջիջները սնուցվում են ավելի շատ թթվածնով: Սպորտը բարենպաստ ազդեցություն ունի մկանների, հոդերի, թոքերի վրա: Այն բարելավում է նաեւ ուղեղի գործունեությունը:

Սկզբունքորեն մոտեցեք այն հարցին, որ ձեր երեխան դառնա ֆիզիկապես կոփված, հոգեպես ներդաշնակ եւ հետաքրքիր մարդ: Սպորտը թերեւս լավագույն խթան է դրա համար:

Թող յուրաքանչյուր երեխա ունենա ամուր ընտանիք, խաղաղ երկինք գլխավերելու եւ այն ամենն, ինչ անհրաժեշտ է անհոգ մանկության համար: Թող մանկական ժպիտները լուսավորեն մեր մոլորակը, իսկ յուրաքանչյուր փոքրիկ բնակիչ լինի առողջ եւ երջանիկ:

Սոֆյա ԱՎԱԳՅԱՆ